ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

ԼՂՀ-ի Առողջապահության Նախարարության և
«ԱՌՄԳԵՆԻԱ» Գենետիկական Հետազոտական ԲՀ միջև

Ներկայումս գիտությունը անցել է մարդու գենոմի ուսումնասիրության նոր պոստգենոմիկ փուլ, որն ուղղված է պատմական և մարդաբանական առանձնահատկությունների շրջանակում նոր գիտելիքների ձեռքբերմանը:

Տվյալ հուշագիրը իր մեջ պարունակում է ԼՂՀ Առողջապահության Նախարարության և «Առմգենիա» Գենետիկական Հետազոտական ԲՀ–ի միջև կնքված երկկողմ համագործակցության պայմանագրի հիմնական դրույթները: Հուշագիրը կազմված է երկու օրինակից:

Հուշագրի նպատակը

«Համագործակցության հուշագիրը» (հետագայում՝ Հուշագիր) իր մեջ ներառում է գենետիկական և բժշկական հետազոտություններ՝ նպատակ ունենալով ստեղծելու հայկական պոպուլյացիայի «գեների բանկ», որը տեղեկատվություն է պարունակելու Արցախի տարածքում բնակվող հայերի ֆենոտիպի և գենոտիպի մասին:
Տեղեկատվությունը կարող է օգտագործվել վարքագծային և էկոլոգիական ռիսկերի գնահատման և առողջության բարելավման նպատակներով:

Տվյալ հուշագիրը կյանքի կոչելու նպատակով կողմերը կիրականացնեն հետևյալ քայլերը

1. Հավաքագրել 2000 (երկու հազար) շահառուների ԼՂ հանրապետության տարբեր շրջաններից:
2. Հավաքագրվածներից վերցնել արյան նմուշ:
3. Կազմակերպել գենոմի ամբողջական հետազոտում արտերկրում:
4. Ստացված արդյունքները կիրառել ԼՂ առողջապահության զարգացման գործընթացում և գենո-անթրոպոմետրիկ հետազոտություններում՝ պահպանելով դրանց գաղտնիությունը:

Հուշագրի համագործակցության ուղղությունները

1. Արյան հավաքագրում ԼՂՀ-ի շրջաններում:
2. Նմուշների ժամանակավոր պահպանում սահմանված կարգով:
3. Նմուշների տեղափոխում ՀՀ:
4. Նմուշների տեղափոխում արտ երկիր՝ հետագա քննություն կատարելու նպատակով:

Հուշագրի հիմնական գործառույթները

1. ԼՂՀ ԱՆ պարտավորվում է ծրագրի շրջանակներում կազմակերպել և կատարել հանրապետության ամբողջ տարածքում երկու հազար շահառուների հավաքագրման, արյան նմուշի վերցման գործընթացը, նմուշների ժամանակավոր պահպանումը և տեղափոխումը ՀՀ, ք. Երևան, <<Առմգենիա>> գենետիկական հետազոտական ԲՀ –ի գրասենյակ:
2. <<Առմգենիա>> գենետիկական հետազոտական ԲՀ իր հերթին պարտավորվում է՝
   - Անհրաժեշտ վերապատրաստում անցկացնել բժշկական անձնակազմի հետ:
   - Կազմել և տրամադրել շահառուների կողմից լրացվող հարցաթերթիկներ
   - Ծրագրի ողջ ընթացքում ապահովել արյան սրվակների և այլ բժշկական պարագաների մատակարարումը:
   - Հավաքագրված նմուշները նախնական մշակման ենթարկել մասնագիտացված կենտրոններում:
   - Ապահովել նմուշների տեղափոխումը արտերկիր՝ վերջնական քննություն կատարելու նպատակով:
   - Վերլուծել արդյունքները:
   - Ապահովել տեղեկատվության գաղտնիությունը և արդյունքները հրապարակել բացառապես երկկողմ համաձայնությամբ:

   Ծրագրի տևողությունը՝ 2 (երկու) տարի:

ԼՂՀ Առողջապահության Նախարարություն	«ԱՌՄԳԵՆԻԱ» Գենետիկական Հետազոտական ԲՀ
Նախարար	Գործադիր Տնօրեն
Աթայան Կարինե	Տաճատ Ամատուրյան
/_____/ Կ.Տ.	/_____/ Կ.Տ.

ք.Ստեփանակերտ
«25» հունվար 2017թ.